տուն որ է Յարութեան դռան առջեւ. եւ է
անդ Սիւնն որ կապեցին զՅիսուս. չարաթ՝ ի
Պատանատեղն. եւ այսպէս անխափան ամէն
տեղ ամէն օր պատարագ կու լինի: Որ եղիցի
պահապան ամենայն քրիստոնէից, մանաւանդ 190
ազգիս Հայոց:

Որ եւ այլ բազում բարի գործս ունէին՝
ծածուկ ի մարդկանէ եւ յայտնի Աստուծոյ,
միայն խոստովանահայրն գիտէ: Կին մի այլ
կայր, որ ուխտ էր եղեալ՝ վանացն դուրս 195
չելնել եւ բնաւ չերդնուլ: Եւ այլ ոմն, զի ընդ
անհաւատսն չխօսէր եւ պտուղ բնաւ չուտէր:
Եւ այլ բազում վարս տեսաք եւ լուաք մաքուր
ծառայից Աստուծոյ՝ արանց եւ կանանց. որ
զցայգ եւ զցորեկ ժամաց եւ աղօթից չի դա- 200
դարէին, զԱստուած միշտ օրհնէին, աշխարհի
խաղաղութիւն հայցէին եւ Հայոց մեղաց թո-
ղութիւն:

Եւ որպէս ծաղկեալ էր Եգիպտոս ճգնա-
ւորօք եւ անապատաւորօք, այսպէս եւ սուրբ 205
Երուսաղէմ ընտիր եւ բարեգործ սրբովք. եւ
զոր ի Սկիւթ եղեալ ճգնաւորսն ընթեռնուաք,
այժմ ի սուրբ Երուսաղէմ աչօք տեսաք ի այս
դառն եւ վերջին ամեռնացեալ եւ սառնացեալ
ժամանակս եւ ժամս: Եւ ի՞ւ է, թէ ոչ առաջ- 210
նորդաւն. զի բարի հովին բարի ոչխարս սատ-
նայ. առաջնորդն ճգնող է եւ հնազանդեալք
նման նմա. ըստ օրինակի պարոնաց եւ իշխա-
նաց ճանաչին զինվորք, եթէ չար, եթէ բարի.

186 արութեան: — 187 զիսուս: — 196 չերթնուլ: